22.qxd 15/11/2025 17:30 Page 1

ԳԵՂԱՄԱ աշխարհ

Քաղաքական, հասարակական, մշակութային թերթ 14 նոյեմբերի 2025թ. թիվ 22 (626)

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆՆ ԱՅՅԵԼԵՑ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ

Նոյեմբերի 4-ին Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը Մարտունի քաղաքի Երեւանյան եւ Մյասնիկյան փողոցներում դիտարկեց ճանապարհաշինական ու արտաքին լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների ընթացքը:

Նրան ուղեկցում էին Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանը, Գեղարքունիքի մարզպետի եւ Մարտունու համայնքապետարանի աշխատակազմերի քաղաքաշինության ոլորտի պատասխանատուներ:

Երեւանյան եւ Մյասնիկյան փողոցների հիմնանորոգման աշխատանքները կատարվում են ՀՀ պետբյուջեի միջոցներով: Ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 677 միլիոն 777 հազար դրամ: Ծրագրով նախատեսված է Մարտունի քաղաքի Երեւանյան եւ Մյասնիկյան փողոցների փողոցների առանձին հատվածների հիմնանորոգում՝ 1,7 կիլոմետր երկարությամբ, ջրահեռացման ներքին եւ արտաքին ցանցերի կառուցում, մայթերի սալարկում, մուտքերի եւ իջատեղերի ասֆալտապատում, գծանշում եւ կահավորում: Կտեղադրվի երկշերտ ասֆալտբետոնե ծածկ՝ 18 հազար 500 քմ մակերեսով: 4400 քմ ասֆալբետոնե շերտ էլ կտեղադրվի մուտքերում եւ իջատեղերում: Մյասնիկյան փողոցում հիմնանորոգման աշխատանքներն իրականացվում են կինոթատրոնի շենքից մինչեւ երաժշտական դպրոցի խաչմերուկ ընկած հատվածում, Երեւանյան փողոցում՝ ոստիկանության շենքից մինչ Ախթամարի արձանի խաչմերուկ ընկած հատվածում:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի սեպտեմբերից եւ 2025 թվականի նոյեմբերի 4-ի դրությամբ իրականացվել շուրջ 20 տոկոսով:

Մարտունի քաղաքի Երեւանյան եւ Մյասնիկյան փողոցների արտաքին լուսավորության ցանցի կառուցման աշխատանքները կատարվում են ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում:

Ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 122 միլիոն 700 հազար դրամ, որի 60 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 40 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը: Շինարարական աշխատանքները սկսվել են 2025 թվականի սեպտեմբերից եւ նոյեմբերի 15-ի դրությամբ իրականացվել շուրջ 40 տոկոսով:

Ծրագրով նախատեսված է արդի չափորոշիչներին համապատասխան արտաքին լուսավորության ցանցի կառուցում Մյասնիկյան եւ Երեւանյան փողոցներում՝ 130 լուսատուների տեղադրմամբ :

Կարեն Սարգսյանը զրուցեց շինարարների հետ, նկատված թերությունների շուրջ արեց դիտողություններ ու առաջարկություններ եւ դրանց վերացման ուղղությամբ տվեց համապատասխան հանձնարարականներ:

Նույն օրը մարզպետ Կարեն Սարգսյանը Մարտունու համայնքապետարանում անցկացրեց ընդլայնված խորհրդակցություն՝ համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանի եւ վարչական ղեկավարների մասնակցությամբ:

Քննարկվեցին ընթացիկ սուբվենցիոն ծրագրերի կատարողականներն ու 2026 թվականի սուբվենցիոն հայտերի ներկայացման գործընթացը, ինչպես նաեւ համայնքի սեփական եկամուտների հավաքագրման եւ կենտրոնացված աղբահանության համակարգին անցնելու հետ կապված հարցերը:

«Գեղամա աշխարհ»

ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆ. ՀԱՎԱՏՈՒՄ ԵՄ, ՈՐ ԱՅՆՏԵՂ ԳԵՐԲՆԱԿԱՆ ՄԻ ՀԶՈՐ ՈՒԺ ԿԱ...



Այսօրվա պես հիշում եմ: 1963 թվականին Երեւանի պետական համալսարանի ֆիզիկայի եւ մեխմաթ ֆակուլտետների մեծ լսարանում (հավանաբար՝ ակադեմիկոս Արտաշես Շահինյանի խորհրդով) տեղի ունեցավ առաջին կուրսեցիներիս հանդիպումը այն ժամանակ արդեն դասական գրող Կոստան Զարյանի հետ:

Նոր - նոր էր Հայաստանում հրատարակվել «Նավը լեռան վրա» վեպը: Կլանված ու զարմացած լսում էինք նրա պատմությունները Մեծ եղեռնի, իր եւ գերմանացի հայտնի հայագետ Յոհաննես Լեփսիուսի հանդիպումների, եվրոպական գիր ու գրականության մեծերի մասին: Հարցեր, անդադար հարցեր... թե ե՞րբ պիտի իր գործերի հիման վրա ֆիլմ նկարահանվի, ի՞նչ նոր գործեր ունի...

Նրան հարցրեցինք նաեւ (այն էլ՝ 1963 - ին), թե՝ Վարպետ, Աստծուն հավատո՞ւմ եք: Մի փոքր լռեց, հայացքը երկինք պարզեց, ձեռքը վեր բարձրացրեց եւ ասաց.

-Ես հավատում եմ: Հավատում եմ, որ այնտեղ Գոյը կա, գերբնական մի հզոր ուժ կա:

Չգիտեմ, ում մոտ ինչպես, սակայն այդ օրվանից սկսեցի աշխարհին այլ աչքերով նայել: Կոստան Զարյան գրողը մինչեւ հիմա էլ ինձ համար լուսավոր մի էակ է, երկինքը երկրին կապող մի օղակ: Նրա նկատմամբ ինձ համակած այդ սերն էր, որ արդեն 90 - ականներին, այցելեցի մեծ գրողի որդուն՝ ճարտարապետ Արմեն Զարյանին: Դուռը բացեց բարեհամբույր գերմանուհի կինը եւ ուղեկցեց ճարտարապետի աշխատասենյակ: Ցուրտ ու մութ տարիներն էին, բակում ամերիկացիները նավթ էին բաժանում, եւ նրանց ծանոթներից մեկը տասը լիտր նավթ վերեւ բարձրացրեց: Ամուսինների երջանկությանը չափ չկար: Հենակները կողքը, ձեռքերն իրար շփելով՝ Արմեն Զարյանն ինչ-որ նախագծի վրա էր աշխատում:

Խոսք է բացվում Երեւանյան այս իրավիճակից: Ասաց՝ երեխաներս արդեն Իտալիայում են:

Պատմում եմ Կոստան Զարյանի հետ համալսարանական մեր հանդիպման մասին եւ խնդրում՝ «Ֆիլմ» թերթի իրավահաջորդ «Գեղարվեստի» համար հոդված գրել իրենց գերդաստանի, Կոստան Զարյանի եւ Լեփսիուսի հետ նրա հանդիպումների մասին:

Օրեր անց հոդվածը պատրաստ էր, որը վերատպել եմ «+Կինո» ամսագրի, թիվ 27-ում:

Ռոբերտ Մաթոսյան

Լուսանկարները տրամադրել է Ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտը եւ Արա Արմենի Զարյանը:

/շարունակությունը՝ էջ 6-ում/

ՎԱՂԱՇԵՆԻ ՔՅՈՒՐԴԻ ԿՈՂ ԵՎ ԱԼՈՅԻ ԿՈՂ ԿԻԿԼՈՊՅԱՆ ԱՄՐՈՑՆԵՐԻ ՌԱԶՄԱՍՏՐԱՏԵԳԻԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Քյուրդի կող եւ Ալոյի կող անվանյալ կիկլոպյան դարաշրջանի երկու ամրոցները գտնվում են Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վաղաշեն գյուղի վարչական տարածքում, «Ձոջ կող» կոչվող լեռնազանգվածի գագաթային հատվածում, ծովի մակերեւույթից շուրջ 2700 մետր բարձրության վրա: նրանք իրարից բաժանվում են մի քանի հարյուր մետր հեռավորությամբ, մի խոր ձորով:

Այս ամրոցների մասին առաջին անգամ մեր պատմագիտության մեջ հիշատակել է անվանի հնագետ Գեդեոն Միքայելյանը՝ իր հեղինակած ու հանրահայտ «Սեւանի ավազանի կիկլոպյան ամրոցները» աշխատության մեջ: Ընդ որում, Գեդեոն Միքայելյանը Վաղաշեն է այցելել 1963 թվականին՝ այս ամրոցներն ուսումնասիրելու նպատակով:

Ինչպես փաստում է Վաղաշեն գյուղի բնակիչ, պետական մի շարք հիմնարկների երկարամյա աշխատակից Ալբերտ Մխիթարյանը, Գեդեոն Միքայելյանին ինքը հանդիպել է պատահական մի դիպվածով ու նրան ուղեկցել այդ ամրոցների տարածքներ:

-Ես այդ ժամանակ ընդամենը 14 տարեկան էի, դպրոցական: Հանդիպեցինք ավտոբուսի կանգառում, իրար հետ զրույցի բռնվեցինք, ու երբ նա իմացավ, որ Վաղաշեն գյուղից եմ, ասաց, որ ինքն էլ է Վաղաշեն գնում՝ սար բարձրանալու եւ ամրոցներն ուսումնասիրելու նպատակով: Ես նրան ուղեկցելու համաձայնություն տվեցի, ու միասին բարձրացանք «Քյուրդի կող» ու «Ալոյի կող» ամրոցներ: Այդ ժամանակ ես բացարձակ պատկերացում չունեի, թե ինչպիսի ականավոր, պատկառելի, գիտնական ու հերոս մարդու հետ շփվելու, քայլելու, զրուցելու պատիվն ունեմ:

/շարունակությունը՝ էջ 5-ում/

22.qxd 15/11/2025 17:30 Page 2

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՇՈՒԲՈՎ ԱՆՑԿԱՑՎԵՑ «ԿԱՐՏՈՖԵՍՏ» ՓԱՌԱՏՈՆԸ

Գավառ համայնքում աշնանային բերք ու բարիքի հավաքը եզրափակվեց «Կարտոֆեստ» միջոցառմամբ եւ հանդիսավոր ու բազմամարդ հյուրասիրությամբ:

Փառատոնին մասնակցեցին Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանը, Գավառի համայնքապետարանի աշխատակազմի, համայնքի կրթամշակութային հաստատությունների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ֆերմերներ, Հայաստանի տարբեր մարզերից ու մայրաքաղաքից հրավիրված հյուրեր:

Ներկայացվող գլխավոր բնամթերքը կարտոֆիլն էր, որի մշակությունը համայնքում առաջին տեղում է: Փառատոնի հյուրերը համտեսեցին ավանդական փռի կարտոֆիլը, նաեւ զարմանքով տեղեկացան, որ կարտոֆիլից կարելի է նույնիսկ թթու եւ մուրաբա պատրաստել:

Փառատոնի հիմնական նպատակն էր՝ սպառողին հնարավորություն տալ՝ տեղում ծանոթանալու Գավառի կարտոֆիլի համային որակներին եւ ապրանքային տեսքին, հենց մշակողից գնել կամ պատվիրել կարտոֆիլ:

-Փորձելու ենք արժեշղթա ստեղծել, եւ այս փառատոնը նաեւ կնպաստի, որպեսզի այլ բնամթերքներ, որ տեղում արտադրվում են, հանրայնացվեն, եւ մենք շուկա դուրս գանք: Սրանով մենք նաեւ հնարավորություն ենք տալիս, որպեսզի մեր տեղի գյուղացիական տնտեսություններն ընդլայնեն իրենց ցանքատարածությունները, նոր մշակաբույսեր փորձեն մշակել: Այսինքն՝ նաեւ սրանով մենք խթանելու ենք ոչ ավանդական գյուղատնտեսական մշակույթի զարգացումը: Եվ երրորդ՝ մենք խթանում են զբոսաշրջային զարգացումը եւ բնակավայրերի համաչափ զարգացումը, որ ամրագրված է նաեւ մեր հնգամյա զարգացման ծրագրում,-նշեց Գավառ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Գրիգոր Դաշտոյանը:

Շուրջ 50 տաղավարային ցուցադրություններում Գավառի բոլոր բնակավայրերի տեղական արտադրանքն էր ու ավանդական խոհանոցը: Տեղում ստեղծվող բերք ու բարիքը ներկայացրին նույնիսկ համայնքի կրթամշակութային կառույցները՝ ոչ միայն խոհարարական, այլեւ գեղարվեստական տարբեր լուծումներով:

«Կարտոֆեստ»-ի շրջանակում համախմբված կարտոֆիլագործներն էլ միմյանց հետ քննարկեցին տարբեր սորտերի մշակման արդյունավետությունը:

Ալվարդ Մանուկյան

ՎԵՐԻՆ ՎԱՐԴԵՆԻԿԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԵԿԵՂԵՑՈՒ ԿՈՂԻՆ ԸՆԿԱԾ ՀՈՒՇԱԿՈԹՈՂԻ ՄԱՍԻՆ

Ամիսներ առաջ անդրադարձել էինք Վերին Վարդենիկ լքված գյուղի Սուրբ Գրիգոր եկեղեցու ճարտարապետությանը, վիմագիր արձանագրություններին, պատմությանը ու կարծել, թե հիմնական ասելիքն ավարտել ենք:

Սակայն հետո ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատմության եւ մշակույթի հուշարձանների պահպանության վարչության նախկին աշխատակից, Գեղարքունիքի եւ Կոտայքի մարզերի հուշարձանների ուսումնասիրությամբ զբաղվող Նորիկ Հազեյանը տեղեկացրեց, որ Վերին Վարդենիկի Սուրբ Գրիգոր եկեղեցու հյուսիսարեւելյան կողմում պառկած վիճակում Քառակոթող հուշարձան կա, որը մինչ 1993 թվականը կանգնած վիճակում է եղել: Ըստ Նորիկ Հազեյանի՝ նման կոթողները եղել են խաչքարերի նախատիպերը, որոնք հիմնականում տեղադրվել են եկեղեցիների մուտքերի մոտ ու թվագրվում են վաղ միջնադարով:

Մեր հերթական այցելության ժամանակ Նորիկ Հազեյանի խնդրանքով լուսանկարեցի այդ կոթողը եւ ուղարկեցի իր էլ հասցեին, իսկ ինքն էլ ուղարկել էր ՀՀ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի տնօրեն Արսեն Բոբոխյանին: Վերջինս հաստատել էր կոթողի իսկությունը եւ մոտավոր ժամանակագրությունը:

Մեր հեռախոսազրույցի ընթացքում էլ Արսեն Բոբոխյանը հաստատեց իր կարծիքը, նշելով, որ նկարում պատկերված կոթողը, մոտ երկու մետր բարձրությամբ ու ավելի քան կես մետր լայնությամբ, վերաբերում է վաղ միջնադարին:

Այն կարող է լինել քառակոթող, ավելի վաղ շրջանում՝ Մենհիր հիշեցնող կոթող:

Այստեղից էլ կարելի է եզրակացնել, որ բացառիկ ու հզոր ճարտարապետություն կրող Վերին Վարդենիկի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին կառուցվել է վաղ միջնադարում, շատ ավելի վաղ, քան թե մինչ այժմ ընդունված կարծիքն է՝ 9-10-րդ դարեր:

Վերին Վարդենիկի տարածքում, պարզվում է, կան նաեւ բացառիկ այլ հուշարձաններ, որոնց կանդրադառնանք մեր հերթական այցի ժամանակ:

Խոսրով Խլղաթյան

ԾԱՓԱԹԱՂՅԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ



Այս տարվա հոկտեմբերի 27-ին սահմռկեցուցիչ ոճրագործության զոհ դարձավ Գեղարքունիքի մարզի Ծափաթաղ գյուղի բնակիչ, երեք տարեկան Տիգրան Օվանեսովը:

Նախ, հայտարարվեց երեխայի անհետ կորելու մասին: Մինչ նոյեմբերի 2-ի կեսօր երեխային փնտրում էին պետական ու տեղական ինքնակառավարման բոլոր մարմինների, բազմաթիվ կամավորների ներգրավվածությամբ, սակայն՝ ապարդյուն:

Ի վերջո, ցավոք, երեխան գտնվեց, սակայն մահացած վիճակում: Արտաքին զննությամբ երեխայի վրա բռնության հետքեր նկատվեցին, իսկ նրա հայրը՝ 50-ամյա Արմեն Օվանեսովը քննչական մարմնին խոստովանեց, որ ինքն է խեղամահ արել իր երեխային: Դատարանի որոշմամբ Արմեն Օվանեսովը կալանավորվել է երկամսյա ժամկետով:

Դեռ մենք կանդրադառնանք այս սոսկալի ոճրագործության մանրամասներին, հուսալով միաժամանակ, որ նախաքննությունը կտա շատ հարցերի պատասխաններ, որոնք դեռ մութ են մնում մեզ համար:

Նոյեմբերի 4-ին Ծափաթաղում հուղարկավորվեց Տիգրանի մարմինը, ու նույն երեկոյան էլ Արմեն Օվանեսովի կողմից գործադրած դաժան բռնության զոհ դարձած երեքամյա Տիգրանի քույր Վարդանուշ Օվանեսովան, եղբայրներ Ավագ, Ավետ, Արամայիս Օվանեսովները պատկան մարմինների օժանդակությամբ իրենց բնակության մշտական վայրից ժամանակավորապես տեղափոխվեցին խնամքի հաստատություն՝ «Մադրիգյան» երեխաների պաշտպանության կենտրոն/ Նախկին Հայ Օգնության Ֆոնդի «Երեխաների աջակցության կենտրոն»/:

Ինչպես տեղեկացրեց Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության եւ սոցիալական հարցերի վարչության գլխավոր մասնագետ Մամիկոն Գալոյանը, երեխաներին խնամքի հաստատություն տեղափոխելու որոշումը կայացվել է Ճամբարակի համայնքապետարանի խնամակալության եւ հոգաբարձության հանձնաժողովի կողմից, հանձնաժողովի հրավիրած նոյեմբերի 4-ի նիստում, որը նախաձեռնվել էր Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի կողմից:

Հանձնաժողովի նիստը սկզբից կայացել է Ճամբարակի համայնքապետարանում: Նիստին հրավիրվել են նաեւ Ճամբարակի համայնքապետարանի աշխատակիցներ, համայնքային ոստիկանության, Միասնական սոցիալական ծառայության Ճամբարակի տարածքային կենտրոնի ներկայացուցիչներ եւ Ծափաթաղի վարչական ղեկավար Դավիթ Գզողյանը: Երկար քննարկումներից հետո, հաշվի առնելով Օվանեսովների ընտանիքում ստեղծված բարդագույն ու ծայրահեղ իրավիճակը, որոշվել է նիստը շարունակել Ծափաթաղի վարչական ղեկավարի նստավայրում:

-Նախ նիստի մասնակիցները զրույցի հրավիրեցին ընտանիքի երեխաների մորը՝ Փառանձեմ Վաթյանին, ու բացատրեցին երեխաներին ժամանակավորապես խնամքի հաստատություն տեղափոխելու հրատապ ու անհրաժեշտ քայլի մասին: Մայրը դրականորեն արձագանքեց ու տվեց իր համաձայնությունը, անգամ ցանկություն հայտնեց՝ երեխաներին խնամքի հաստատություն ուղեկցելու՝ նրանց կեցության պայմաններին ծանոթանալու նպատակով: Այնուհետ զրույցի հրավիրվեցին երեխաները, ովքեր եւս խնամքի հաստատություն տեղափոխվելու համար որեւէ առարկություն չներկայացրին: Այդ ամբողջ ընթացքում մենք կապի մեջ էինք «Մադրիգյան» երեխաների պաշտպանության կենտրոնի ներկայացուցիչների հետ, ուշ երեկոյան էլ կազմակերպվեց երեխաների տեղափոխությունը,-ներկայացրեց Մամիկոն Գալոյանը:

Խոսրով Խլղաթյան

ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎՈՒՄ ԵՆ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի բազմաբնակարան թվով 10 շենքերի բակային տարածքները հիմնանորոգվում են ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում:

Ինչպես տեղեկացրին Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմից, Վարդենիսի բազմաբնակարան 10 շենքերի բակային տարածքների հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 163 միլիոն 872 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Վարդենիսի համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է Վարդենիս քաղաքի Երիտասարդության 2, 3, 6, 11, 12, Արզոյան 2, Վ.Համբարձումյան 17 եւ 19, Լեռնագործների 1/1 հասցեներում գտնվող բազմաբնակարան շենքերի բակային տարածքների հիմնանորոգում՝ ասֆալտապատմամբ, եզրաքարերի տեղադրմամբ, ջրահեռացման համակարգերի նորոգմամբ, այլ կարգի աշխատանքներով: Հիմնանորոգվող բակային տարածքներն ընդգրկում են 14 հազար 341 քառակուսի մետր մակերես:

Շինարարական աշխատանքների մեկնարկը տրվել է 2025 թվականի օգոստոս ամսից: 2025 թվականի հոկտեմբերի 28-ի դրությամբ շինարարական աշխատաքններն ավարտված են շուրջ 70 տոկոսով:

Բակերի բարեկարգման աշխատանքները սկսել են կոյագծերի փոխարինման եւ թարմացման աշխատանքներով՝ հետագայում ասֆալտի շերտը քանդելուց զերծ պահելու համար: Շինաշխատանքների ընթացքում ապամոնտաժվում են նաեւ ապօրինի ավտոտնակներն ու օժանդակ կառույցները, որոնց հաշվին էլ ընդարձակվում են բակային տարածքները: Վարդենիս համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Կարեն Մկրտչյանի ներկայացմամբ՝ Ազգալդյան փողոցի բազմաբնակարան շենքի բակում, թվով 7-8 ապօրինի ավտոտնակներ են ապամոնտաժվել: Տարածքը ազատվել է, կառուցվում է նաեւ խաղահրապարակ:

Ծրագրի իրականացման արդյունքում ոչ միայն հիմնանորոգվում ու բարեկարգվում են բազմաբնակարան շենքերի բակային տարածքները, այլ նաեւ երեխաներն ունենալու են զբոսանքի ու խաղերի համար ընդարձակ տարածք:

Շինարարական աշխատանքները նախատեսված է ավարտի հասցնել 2025 թվականի ընթացքում:

«Գեղամա աշխարհ»

22.qxd 15/11/2025 17:30 Page 3

ԼԵՌՆԱՅԻՆ ԱՄՐՈՑԻ ԱՎԵՐԱԿՆԵՐԻ ՄԵՋ ԹԱՔՆՎԱԾ ԵՐԿՈՒ ԽԱՉՔԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

«Մշկոյի բերդ» կոչվող լեռնային ամրոցի ավերակները գտնվում են Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի տարածքում, Գեղամա լեռնավահանի ստորոտում, Գավառ քաղաքից 4,5 կիլոմետր դեպի հյուսիս- արեւմուտք: Ըստ հնագետների ու հուշարձանների պահպանության պետական ցանկում հաշվառված ժամանակագրական տվյալի՝ «Մշկոյի բերդ» ամրոցը կառուցվել է Քրիստոսից առաջ 2-1 հազարամյակների ընթացքում: Հուշարձանը թեեւ ստույգ ու ճշգրտված չափագրություն չունի, սակայն սովորական աչքով էլ տեսանելի է նրա հսկայական ընդգրկվածությունն ու ծավալումը դեպի լեռնային գոտիներ: Աջուձախ, բոլորեքյան բարձրացող անհամար բլուրների վրա կամ դրանց ստորոտներում նկատելի են ձգվող պարիսպների, պատերի, շինությունների հետքեր, հնագույն դամբարաններ: Սակայն աչքից գրեթե հեռու, լեռնային խորդուբորդությունների ու ժամանակների մշուշներում կորած այս հնագույն բնակատեղիի տարածքում, մի ձորակի մեջ, թաքնված են երկու խաչքար՝ գեղաքանդակ ու բարձրարվեստ, որոնք կրում են վիմագրություն:

Այս խաչքարերի գոյությունն ինձ համար կրկին բացահայտվեցին Գավառ քաղաքի բնակիչ, հնասեր, «Աժդահակ Տուր»-ի ղեկավար Թաթուլ Տոնոյանի շնորհիվ:

Խաչքարերից առաջինը, բացի ճակատային մասի արձանագրությունը, բացառիկ ու խորհրդանշող բովանդակության քանդակ է իրենից ներկայացնում: Հենց վիմագրի ներքո, խաչի վրա, պատկերված է Հիսուս Քրիստոսը, իսկ խաչի ներքեւում, աջ ու ձախ կողմերում պատկերված են կին ու տղամարդ՝ ձեռքերը միահյուսած խաչված Հիսուսի ոտքերին, նստած վիճակում: Վերեւում, Հիսուսի աջ ու ձախ կողմերում, ամենայն հավանականությամբ, պատկերված են հրեշտակները:

Ինչպես մեկնաբանեց խաչքարագետ Սեւակ Արեւշատյանը, կամ Խաչի ներքո խոնարհվածները ամուսնական զույգ են, ովքեր բարեխոսություն են խնդրում Տիրոջից, կամ նրանցից մեկը Մարիամ Աստվածածինն է, մյուսը՝ Հովհաննես Ավետարանիչը:

Խաչքարն իր պատրաստման ոճով հիշեցնում է 16-րդ դարը: Ճակատի մասի արձանագրության մեջ համեմատաբար հեշտ ընթեռնելի է «Սուրբ Խաչս բարեխոս» հատվածը, իսկ շարունակության մեջ, մաշվածության պատճառով, հստակ չի հասկացվում բարեխոսի ստույգ անունը: Խաչքարի մեջտեղում, զարդանախշերի արանքում նկատելի են Դ Է Վ Ա Մ ու այլ տառեր, որոնք եւս մասնագետների կողմից դեռ վերծանման կամ մեկնաբանման կարիք ունեն: Խաչքարերից երկրորդը տեղադրված է առաջինից դեպի արեւմուտք, մի քանի մետր հեռավորությամբ: Երկրորդի վրա հստակ կարդացվեց պատրաստման թվականը՝ ՁԿԲ /1513/:

Գեղաքանդակ այս խաչքարի ճակատային մասով մեկ, ընդ որում՝ մեզ ոչ հեռու ժամանակակից մարդու ձեռքով փորագրված է. «ՍՈՒՐԲ ՍԱՐԻԲԵԿ»:

Մի բան հստակ է, որ այս խաչքարերն այստեղ են բերվել բոլորովին ուրիշ տեղից, մանավանդ որ նրանց համար այժմ որպես պատվանդան ծառայում է բետոնյա շերտը, որը տեղադրվել է ոչ հեռու ժամանակներում, գուցե թե մոտ կես դարի վաղեմությամբ: Չի բացառվում , որ այն բերված լինի «Խաչեր» թաղամասից, որտեղից բազմաթիվ խաչքարեր են տեղափոխվել ժամանակին կամ անհետացել: Իսկ ո՞վ եղած կլինի Սուրբ Սարիբեկը, ում անունը հայտնվել է բարձրարվեստ այս խաչքարի վերնամասում: Դժվար չէ կռահել, որ նա եղած կլինի այս խաչքարերն այստեղ տեղափոխող մի այր, ով մի ինչ-որ անհայտությունից լույս աշխարհ է հանել հայկական խաչքարագործության այս երկու հրաշալի օրինակները, որոնք այժմ առանձնակի շուք են տալիս «Մշկոյի բերդ» ամրոցի ավերակներին:

Այս խաչքարերի հարեւանությամբ էլ գտնվում է հնագույն մի դամբարան՝ կլոր շարվածքով:

Խոսրով Խլղաթյան

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿՈՒՆՔ ԳՅՈՒՂՈՒՄ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է ԿԱՌՈՒՑՎՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Ակունք գյուղում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում արդեն մեկ ամիս է, ինչ սկսվել եւ ընթանում են ոռոգման համակարգի կառուցման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրեց Ակունքի վարչական ղեկավար Նիկոլա Խաչատրյանը, Ակունք գյուղի ոռոգման համակարգի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 149 միլիոն դրամ, որի 75 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 25 տոկոսը՝ Ակունքի համայնքապետարանը: Ծրագրով նախատեսված է ոռոգման ջրատարի կառուցում Ակունքի փողոցներում, երկաթբետոնյա կիսախողովակներով, 2730 գծամետր երկարությամբ:

Ծրագրի իրականացման արդյունքում 2026 թվականի ոռոգման սեզոնին նորակառույց առուներն առանց կորստի ջուր կհասցնեն 930 տնտեսության տնամերձ հողամասեր:

-Ոռոգման հին համակարգը, որը սկսվում է Գառնիկ Խաչատրյան փողոցից, անցնում 9-րդ փողոցով ու ավարտվում Զորավար Անդրանիկ փողոցի վերջնամասում, խարխլված, ջարդված վիճակում էր:Հողային շերտով էր ջուրը գնում, որն ահռելի մեծ քանակությամբ կորուստներ էր տալիս:Կարտոֆիլի ցանքատարածություններ են շուրջբոլորը: Ոռոգման ցանցը նպաստելու է, որպեսզի գյուղացիներն առավել եւս շատ կարողանան մշակել հողատարածքները: Եթե եղանակային պայմանները չխոչընդոտեն, ոռոգման համակարգի շինարարությունը կավարտվի առաջիկա մեկ-երկու շաբաթների ընթացում,-ներկայացրեց Նիկոլա Խաչատրյանը:

2025 թվականի նոյեմբերի 11-ի դրությամբ շինարարական աշխատանքները գտնվում են ավարտական փուլում:

Անահիտ Կարեյան

ՀՐԱԶԴԱՆ ԳԵՏՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼ Է ԲԱՅԴԱՐԿԱՆԵՐԻ ԵՎ ԿԱՆՈԵՆԵՐԻ ՀՈՒՇԱՄՐՑԱՇԱՐ

Հրազդան գետում անցկացվեց բայդարկաների եւ կանոեների հուշամրցաշար՝ նվիրված Արցախյան 44-օրյա պատերազմում հերոսաբար զոհված Գորիս Հովսեփյանի հիշատակին:

Հուշամրցաշարին մասնակցեցին 40-ից ավել մարզիկներ: Հաղթողները պարգեւատրվել են հուշամեդալներով եւ գավաթներով:

Արդեն հինգերորդ տարին է, ինչ Սեւանի Աշոտ Ավետիսյանի անվան ջրային մարզաձեւերի դպրոցը նախաձեռնում եւ անցկացնում է բոյդարկաների եւ կանոեների հուշամրցաշար՝ նվիրված 44-օրյա պատերազմու հերոսաբար զոհված Գորիս Հովսեփյանի հիշատակին:

Գորիսը ծնվել է 2001թվականի փետրվարի 14-ին, Սեւան քաղաքի Ցամաքաբերդ թաղամասում: Զբաղվել է տարբեր մարզաձեւերով: Ամենից շատ սիրում էր թիավարությունը: Մասնակցել է շատ մրցումների ու միշտ զբաղեցրել է առաջատար հորիզոնականներ: Ստացել է շատ պատվոգրեր, մեդալներ ու մրցանակներ: Ավարտել է Ցամաքաբերդի թիվ 5 միջնակարգ դպրոցը, այնուհետեւ Սեւանի պետական քոլեջը:

2019 թվականի հուլիսին ուսումը կիսատ թողելով զորակոչվել էր բանակ:

Հոկտեմբերի 12-ին հերթական մարտական առաջադրանքը գերազանց կատարելուց հետո թշնամին նկատել է իրենց խումբը: ԱԹՍ-ի հարվածից անմահացել են խմբի 15 հերոս տղաները, որոնց թվում էր նաեւ Գորիսը:

Հայրենիքի սահմանները պաշտպանելիս ցուցաբերած արիության ու խիզախության համար Գորիս Հովսեփյանը հետմահու պարգեւատրվել է ,Մարտական ծառայությանե մեդալով:

Նրա վառ հիշատակը հավերժ կմնա բոլորի սրտում:

Ցամաքաբերդի միջնակարգ դպրոցի ՆՁՊ առարկայի դասարանը կրում է Գորիս Հովսեփյանի անունը:

Սեւանի Ցամաքաբերդ թաղամասի բնակիչների նախաձեռնությամբ Ցամաքաբերդում կանգնեցվել է Խաչքար եւ Արծիվ հուշարձան նվիրված Արցախյան 44-օրյա պատերազմում նահատակված Գորիս Հովսեփյանի հիշատակին:

Արմինե Ղուկասյան

ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎՈՒՄ Է ԿԱՐՄԻՐԳՅՈՒՂԻ ՀՈՒՆԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ ՓՈՂՈՑԸ

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Կարմիրգյուղ բնակավայրում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում սկսվել եւ ընթանում են Հունան Ավետիսյան փողոցի հիմնանորոգման աշխատանքները:

Կարմիրգյուղի Հունան Ավետիսյան փողոցի հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 160 միլիոն դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Գավառի համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է Հունան Ավետիսյան փողոցի ասֆալտապատում՝ 1260 գծամետր երկարությամբ եւ շուրջ 10 հազար քառակուսի մետր մակերեսով, ջրահեռացման ներքին համակարգի կառուցում՝ 1180 գծամետր երկարությամբ:

Շինարարական աշխատանքները մեկարկել են 2025 թվականի հոմտեմբերի 7-ից եւ այժմ գտնվում են ավարտական փուլում:

Շինաշխատանքներն իրականացնում է «Գավառի ՃՇՇ ԲԲԸ»-ն:

Ալվարդ Մանուկյան

22.qxd 15/11/2025 17:30 Page 4

ԱՅԳՈՒՏԻ «ԱՐՄԱԹ» ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՈՑԻ ՍԱՆԵՐԸ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ԳՐԱՆՑԵԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Այգուտ գյուղի միջնակարգ դպրոցի «Արմաթ» ճարտարագիտական աշխատանոցի սաները մրցանակների են արժանացել միջազգային մրցույթներում:

Ինչպես տեղեկացրեց Այգուտի միջնակարգ դպրոցի «Արմաթ» ճարտարագիտական աշխատանոցի խմբավար Շահեն Արաբաչյանը, խմբակի սաներն անընդմեջ մասնակցել են տարատեսակ միջոցառումների, մրցույթների եւ ցուցահանդեսների, վերջին տարիներին՝ նաեւ ԱԹՍ մրցույթների եւ զբաղեցրել մրցանակային տեղեր հատկապես ռոբոտաշինության ու ԱԹՍ մրցույթների ժամանակ:

-Վերջին մեկ տարվա ընթացքում Այգուտի «Արմաթ» ճարտարագիտական աշխատանոցի սաների հետ մասնակցել ենք 3 միջազգային մրցույթների, «FirstRobotiks» եւ «WRO» ռոբոտաշինության միջազգային մրցույթներին, որոնցից «FirstRobotiks» մրցույթին մասնակցել ենք ԱՄՆ-ում, իսկ «WRO» (ռոբոտների համաշխարհային օլիմպիադա) բաց առաջնությանը մասնակցել ենք Սլովենիայի Լյուբլյանա քաղաքում, այս տարվա սեպտեմբերի 3-5-ին: Վերջին՝ Ռոբոտների համաշխարհային օլիմպիադայի բաց առաջնությանը մեր խմբակի 2 եւ Երեւանի թիվ 131 դպրոցի Արմաթի 1 սան ներկայացան «Ապագա նորարարներ» անվանակարգում, կրտսեր տարիքային խմբում, որի շրջանակներում ներկայացրինք մի ռոբոտասարք, որը կարողանում է ամրացվել գազատար խողովակին, եւ , շարժվելով գազատար խողովակի երկայնքով, փնտրում է գազի արտահոսք, որը հայտնաբերելու դեպքում կանգ է առնում, արձակում զգուշացնող բարձր ձայնային ազդանշան եւ ուղարկում է SMS հաղորդագրություն ռոբոտը սպասարկող մասնագետին կամ գազի վթարային ծառայության աշխատակցին, ինչից հետո մասնագետը կարողանում է GPS համակարգի միջոցով իմանալ, թեւ որտեղ է գտնվում ռոբոտը եւ մոտենում է՝ վթարված գազատար խողովակը նորոգելու: Միջազգային այդ ստուգատեսում՝ կրտսեր տարիքային խմբում, մեր սաները գրավեցին պատվավոր առաջին հորիզոնականը՝ ստանալով Ռոբոտների համաշխարհային օլիմպիադայի եզրափակիչ փուլին մասնակցելու ուղեգիր: Գլխավոր ստուգատեսը կկայանա 2025 թվականի նոյեմբեր ամսի վերջին, Սինգապուրում: Թիմի կազմում ներգրավված են Այգուտի «Արմաթ» ճարտարագիտական աշխատանոցի սաներ Գրիգոր Խոջայանը, Արարատ Բայանդուրյանը եւ Երեւանի թիվ 131 դպրոցի Արմաթ ճարտարագիտական աշխատանոցի սան Վահե Գաբրիելյանը,- ներկայացրեց Շահեն Արաբաչյանը:

Այգուտի միջնակարգ դպրոցի Արմաթ ճարտարագիտական աշխատանոցն իր գործունեությունը սկսել է 2018 թվականի հունվար ամսից ու մինչ այժմ ակտիվ գործունեություն է ծավալում: «Արմաթ» ճարտարագիտական աշխատանոցում սովորում են 13 սան: «Արմաթ»-ը արտադասարանական խմբակ է, որտեղ ստանում են համընդհանուր ճարտարագիտական կրթություն: Այստեղ ուսումնասիրվում է 4 կրթական ուղղություններ, որոնք են՝ ծրագրավորում-ծրագրավորման հիմունքներ, եռաչափ մոդելավորում-եռաչափ տպագրություն եռաչափ տպիչով, 2D գրաֆիկա-աշխատանք թվային կառավարմամբ շաղափային եւ լազերային հաստոցով, ռոբոտաշինություն-միկրոէլեկտրոնիկայի տարրեր:

Շահեն Արաբաչյանը լի է եռանդով, ոգեւորված իր սաների միջազգային նվաճումներով ու հավատացած, որ գրանցված հաղթանակներին հաջորդելու են ավելի ծանրակշիռ հաջողությունները:

Խոսրով Խլղաթյան

ԳԱՎԱՌԻ ԹԻՎ 2 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԵՎ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ «ԱՐՄԱԹ» ԱՇԽԱՏԱՆՈՑԻ ՍԱՆԵՐԸ ՄՐՑԱՆԱԿՆԵՐՈՎ ԵՆ ՎԵՐԱԴԱՐՁԵԼ ՊԱՆԱՄԱՅՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ ՌՈԲՈՏԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՄՐՑԱՇԱՐԻՑ

Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի ավագ եւ Պապին Ղանդիլյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցներում գործող «Արմաթ» աշխատանոցի սաներ Վանիկ Մանուկյանը եւ Օնիկ Հակոբյանը երկրորդ տեղ են գրավել Պանամայում վերջերս կայացած «FIRST Global»ռոբոտաշինության առաջնությունում:

Ինչպես տեղեկացրեց Գավառ քաղաքի Պապին Ղանդիլյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցի տնօրեն Ալիտա Գասպարյանը, «FIRST Global»-ը ռոբոտաշինության եւ ճարտարագիտության ամենահեղինակավոր միջազգային առաջնություններից է: Մրցաշարին մասնակցել են 192 թիմ՝ 182 երկրներից: Մրցույթի թեմատիկան եղել է ռոբոտների միջոցով բնապահպանական խնդիրների լուծումը: Հայաստանի թիմը գրավել է պատվավոր երկրորդ տեղը: Մեր թիմի մարզիչ-խմբավարը եղել է Էրիկ Միրզոյանը, անդամները՝ Դվինի միջնակարգ դպրոցի Արմաթ աշխատանոցի սան Դավիթ Ղազարյանը, Գավառի N 2 միջնակարգ դպրոցի Արմաթ աշխատանոցի սան Օնիկ Հակոբյանը, Գավառի ավագ դպրոցի Արմաթ աշխատանոցի սան Վանիկ Մանուկյանը եւ Երեւանի N 131 դպրոցի Արմաթ աշխատանոցի սան Մարի Օհանյանը:

-Մեր դպրոցի «Արմաթ» աշխատանոց այժմ հաճախում են 19 աշակերտ: Ի դեպ, Գավառի ավագ դպրոցի սան Վանիկ Մանուկյանը ժամանակին կրթվել է մեր աշխատանոցում, այնպես որ, Պանամայում կայացած միջազգային ստուգատեսում գրանցած հաղթանակը նաեւ մեր հաջողությունն ենք համարում: Վերջերս էլ մեր թիմը մասնակցել է Վարդենիկում կայացած ռոբոտաշինքյան առաջնությանը, որտեղ հաղթող է ճանաչվել ու պետք է Գեղարքունիքի մարզը ներկայացնի առաջիկայում կայանալիք հանրապետական առաջնությանը: Մենք անհամբեր սպասում ենք միջազգային մրցաշարում հաղթանակ ապահոված մեր սաների վերադարձին՝ նրանց շուքով դիմավորելու եւ շնորհավորելու համար,-ներկայացրեց Ալիտա Գասպարյանը:

Արմաթը ճարտարագիտական կրթության հայկական ազգային ծրագիր է, որն իրականացվում է Առաջատար Տեխնոլոգիաների Ձեռնարկությունների Միության կողմից, ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ:

Խոսրով Խլղաթյան

ՄԱԴԻՆԱՅՈՒՄ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՐԿՈՒ ՃԱՆԱՊԱՐՀ Է ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎԵԼ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Լեռնակերտ-Մադինա միջհամայնքային նշանակության ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքներն արդեն գտնվում են ավարտական փուլում, որոնք կատարվել են ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում:

Լեռնակերտ-Մադինա ավտոճանապարհի հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 97 միլիոն 327 հազար 565 դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է Լեռնակերտ-Մադինա ավտոճանապարհի հիմնանորոգում՝ 1100 գծամետր երկարությամբ եւ 5500 քմ մակերեսով: Կառուցվել է նաեւ ջրահեռացման համակարգ:

Շինարարական աշխատանքները սկսվել են 2025 թվականի օգոստոսից եւ 2025 թվականի նոյեմբեր 11-ի դրությամբ գտնվում են ավարտական փուլում:

Ճանապարհի հիմնանորոգվող հատվածը Լեռնակերտի նոր կառուցվող դպրոցն արդեն կապում է Մադինայի Սուրբ Ամենափրկիչ նորակառույց եկեղեցու եւ Ներսես Կարապետյանի տուն-թանգարան տանող գլխավոր ճանապարհի հետ: Ծրագրի շրջանակներում վերանորոգվել է նաեւ Մադինա եւ Լեռնակերտ բնակավայրերն իրար կապող կամուրջը, որի շրջակայքում Արգիճի գետի հիասքանչ կիրճն է ու Արմաղան լեռը՝ նույնքան սքանչելի բնապատկերներով:

Սուբվենցիոն մեկ այլ ծրագրի շրջանակներում հիմնանորոգվել է հայտնի գեղանկարիչ Ներսես Կարապետյանի տուն-թանգարան տանող ճանապարհը:

Մադինայի 10-րդ փողոցի հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 31 միլիոն 424 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է Ներսես Կարապետյանի տուն-թանգարան տանող ճանապարհի ասֆալտապատում՝ շուրջ 560 մետր երկարությամբ եւ 2800 քառակուսի մետր մակերեսով:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի օգոստոսից եւ ավարտվել հոկտեմբերի 20-ին:

-Ճանապարհաշինական երկու ծրագրի իրականացման արդյունքում ոչ միայն տասնյակ տնտեսություններ են օգտվելու ասֆալտապատ ճանապարհներից, այլ նաեւ բազմաթիվ զբոսաշրջիկներ, ովքեր Ներսես Կարապետյանի տուն-թանգարան են գալիս թե՛ Հայաստանի տարբեր մարզերից, թե՛ աշխարհի տարբեր երկրներից: Այս առումով էլ Մադինա-Լեռնակետ ճանապարհի եւ 10-րդ փողոցի հիմնանորոգման ծրագրերը մեծապես խթանելու են տուրիզմի զարգացումը Մարտունի համայնքում ու մեր գյուղում,- ներկայացրեց Հարություն Հայրապետյանը:

Շինարարական աշխատանքներն իրականացրել է «ՎՄՎ ՔԱՄՓԵԻ» ՍՊԸ-ն

ՎԱՂԱՇԵՆՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑ Է ԿԱՌՈՒՑՎՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վաղաշեն գյուղում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում այս տարվա օգոստոս ամսից սկսվել եւ ընթանում են լուսավորության արտաքին ցանցի կառուցման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրեց Վաղաշենի վարչական ղեկավար Ասատուր Մարգարյանը, Վաղաշենի արտաքին լուսավորության ցանցի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է շուրջ 18 միլիոն դրամ, որի 60 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 40 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է արտաքին լուսավորության ցանցի կառուցում Վաղաշեն գյուղի 1-ին փողոցի 2-րդ նրբանցքում, 2-րդ փողոցի 1-ի փակուղում եւ 1-ին նրբանցքում, 4-րդ փողոցի շարունակվող հատվածում ու 1-ին նրբանցքում , 9, 21, 25-րդ փողոցներում, շուրջ 4 կիլոմետր երկարությամբ, ԼԵԴ համակարգով աշխատող 136 լուսատուների տեղադրմամբ:

2025 թվականի նոյեմբերի դրությամբ շինարարական աշխատանքներն իրականացված են շուրջ 80 տոկոսով:

Շինարարական աշխատանքներն իրականացնում է «Սաշիկ եւ Սեւակ եղբայրներ» ՍՊԸ-ն:

Շինարարությունը նախատեսված է ավարտել 2025 թվականի ընթացքում:

Ծրագրի իրականացման արդյունքում Վաղաշենի վերնշյալ փողոցների բնակիչները լուսավորության արտաքին ցանցից օգտվելու հնարավորություն ունենալու են առաջին անգամ:

«Գեղամա աշխարհ»

22.qxd 15/11/2025 17:30 Page 5

ՎԱՂԱՇԵՆԻ ՔՅՈՒՐԴԻ ԿՈՂ ԵՎ ԱԼՈՅԻ ԿՈՂ ԿԻԿԼՈՊՅԱՆ ԱՄՐՈՑՆԵՐԻ ՌԱԶՄԱՍՏՐԱՏԵԳԻԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

/սկիզբը՝ էջ 1-ում/

Միայն հետո, երբ հրաժեշտ տվեցի նրան, մեր համագյուղացիներն ասացին, որ ուղեկցել եմ ԽՍՀՄ հերոս Գեղեոն Միքայելյանին,-պատմեց Ալբերտ Մխիթարյանը, ում ուղեկցությամբ էլ մենք վերջերս բարձրացանք Ջոջ կող լեռ՝ Վաղաշենի կիկլոպյան ամրոցները սեփական աչքերով տեսնելու եւ ուսումնասիրելու նպատակով:

Իսկ ի՞նչ է գրում Գեղեոն Միքայելյանը կիկլոպյան այս երկու ամրոցների մասին: «Քյուրդի կողի եւ Ալոյի կողի ամրոցները գտնվում են Վաղաշեն գյուղից 1-1,5 կլիոմետր դեպի հարավ: Սրանք ընկնում են Մարտունու արվարձանում եղած ամրոց-շենի գծի վրա, 2,5-3 կիլոմետր հեռավորությամբ: Այս ամրոցներն իրարից հեռու են կես կիլոմետրով, նրանց բաժանում է մի խոր ձոր: Քյուրդի ամրոցը նման է փակված պայտի, գրավում է կես հեկտար տարածություն, պարիսպներն ունեն չորս մետր լայնություն, շարված անտաշ ու անշաղախ բազալտե խոշոր քարերով, մեջը լցված մանր քար ու խիճ:

Ամրոցն ունի հինգ քարաբուրգ, որոնցից երկուսը կառուցված են մուտքի աջ եւ ձախ կողմերում, երկուսը՝ հարավարեւմտյան եւ հյուսիսարեւմտյան անկյուններում, հինգերորդ աշտարակը կանգնած է պարսպի հյուսիսարեւելյան ժայռաբլրակի վրա, որն օգտագործվել է որպես պարիսպ, ինչպես այդ տեսանք այլ ամրոցներում: Աշտարակներն ունեն տարբեր մեծություն: Ամրոցը եւ շրջակայքը դեպի հարավ ծածկված են կացարանների մնացորդներով:

Ալոյի կողի ամրոցը, համեմատած Քյուրդի կողի ամրոցի հետ, ավելի մեծ տարածություն է գրավում՝ մոտ 1 հեկտար: Այն ունի միջնապարիսպ, որն ամրոցը բաժանում է երկու համարյա իրար հավասար մասերի՝ արեւելյան եւ արեւմտյան: Արեւմտյան մասի հարավարեւելյան անկյունում գտնվում է մուտքը, որի երկու կողմերում երեւում են քարաբուրգերի մնացորդները:

Աշտարակներն ունեն 5*5 մեծություն: Պարիսպների ու աշտարակների կառուցման տեխնիկան միանգամայն համընկնում է Քյուրդի կողի ամրոցի կառուցման տեխնիկային, ուստի երկուսն էլ կարելի է համարել միեւնույն ժամանակվա կառույցներ:

Ամրոցում ու նրանից դուրս բազմաթիվ կացարանների ավերակներ կան, նրա հյուսիսային պարսպի երկայնքով, արեւելքից արեւմուտք, ընկած է ժայռապատ ոչ բարձր բլուր, որի խորշերը, ըստ երեւույթին, ծառայել են որպես կացարաններ: Ամրոցից դեպի հարավ, վարելահողում ընկած քարակույտերը հավանաբար դամբարաններ են: Երկու ամրոցներն էլ զուրկ են մշտական ջրից: Այս ամրոցները, չնայած իրենց դիրքով գերիշխում են շրջապատի վրա, հատկապես Սեւանա լճի ավազանի կողմը, այնուամենայնիվ, կարծում ենք, որ նրանք խոշոր ռազմական դեր չէին կարող խաղալ երկրի պաշտպանության գործում: Հետեւաբար, այս ամրոցներն ունեցել են տեղական պաշտպանական նշանակություն եւ գուցե այս երկրի կյանքում դեր են խաղացել անասնապահության գործում»:

Գտնվելով տեղում ու մոտիկից, սեփական աչքերով զննելով այս ամրոցները, եկանք այն հետեւության, որ վերջին մի քանի տողերում անվանի հնագետը առնվազն ճշգրիտ չի կողմնորոշվել՝ թերագնահատելով սրանց դերն ու նշանակությունը: Գուցե թե դա բխում է նրանից, որ հնագետը այս երկու ամրոցները չի դիտարկել դեպի հարավ ընկած հնագույն այլ ամրոցների ու ամենակարեւորը՝ հնագույն ջրանցքի ու ջրամբարների միասնական շղթայի մեջ:

Դժվար է հասկանալ, թե ինչու է Գեղեոն Միքայելյանը կարծել, թե այս ամրոցները զուրկ են եղել մշտական ջրից, այն դեպքում, երբ հենց դրանց վերին հատվածի կողքերով ոչ միայն շատ հստակ երեւում են հնագույն ջրանցքի հետքերը, այլ նաեւ այդ նույն ջրանցքը գործում է մինչ օրս՝ ոռոգման ջուր մատակարարելով Վաղեն գյուղի բոլոր տնտեսություններին:

Գուցե թե շատերն առարկեն ու պնդեն, որ այս ջրանցքը չի գործել այդ տարիներին՝ 1960-ական թվականներին, սակայն բոլոր տարեց վաղաշենցիները կհիշեն, որ այդ ջրանցքը գործել է շատ ավելի վաղ ու միշտ, առանց ընդհատումների: Ու դա եղել է Վաղաշենին ջրով սնուցող ամենակարեւոր կենարար ակունքը: Այն ավագ ու կրտսեր տարիքի վաղաշենցիների հիշողության մեջ մնացել է որպես «Մանասի առու», որը սկիզբ է առնում Մարտունի գետի ակունքներից ու շուրջ 20 կիլոմետր հոսելով լեռան գլխապտույտ առաջացնող թեքություններով, լեռնագագաթի հարթություններով կամ խորդուբորդություններով, ոռոգման ջուր է մատակակարում Վաղաշեն գյուղին ու Մարտունի քաղաքին, Գեղհովիտ գյուղի ցանքերին:

Սակայն այս ջրանցքի անունը սերունդների հիշողության մեջ մնացել է «Հեսրի առու» անունով, ինչը բառացի նշանակում է՝ «Գերիների առու»: Ու եթե ժամանակին անվանի հնագետը այդ ջրանցքի հետքերով քայլեր մի քսան կիլոմետր ու հասներ մինչ նրա սկիզբը, անցնելով լեռնային բարդ տեղանքներով, ապա նման եզրահանգում չէր անի ու կհայտնաբերեր ջրաշինարարության բացառիկ հուշարձաններից մեկը մեր բարձրադիր աշխարհում: Ի դեպ, այդ նույն ջրանցքը սնուցել է մի քանի հնագույն ջրամբարներ, որոնք գտնվում են այս ամրոցներից մոտ 7-8 կիլոմետր հեռավորությամբ, եւ որտեղ ամբարել են ջուրը՝ բերդերը, բնակավայրեն ու ցանքերը երաշտ տարիներին ջրով ապահովելու համար:

Տողերիս հեղինակին բախտ վիճակվեց՝ 1996 թվականին հայ-իտալական միացյալ հնագիտական արշավախմբի ղեկավարներ Սիմոն Հմայակյանին ու Ռաֆայելե Բիշիոնեին ուղեկցելու «Հեսրի առու» ջրանցքի ակունքներ ու միջնամաս: Ուղեկցելու խնդիրն էլ առաջացավ նրա համար, որ իտալացի հնագետը հարցազրույցում նշեց, թե իրենք գտել են այն լճակը, որից սնվել են Մարտունու տարածաշրջանի բերդերը: Նայելով քարտեզի վրա նշված հատվածին՝ առարկեցի ու պնդեցի, որ դա ոչ թե բնական լճակ է, այլ՝ արհեստական ջրամբար, որը սնվել է լեռների փեշերով մեկ ձգվող հնագույն ջրամբարից:

Իտալացի հնագետն իր տեսածից հիանում-երջանկանում էր անթաքույց, ու երբ իմացավ, թե ինչպես է կոչվում ջրանցքը՝ «Գերիների առու», համոզիչ կարծիք հայտնեց, թե նման ծավալի շինարարություն կարող էր իրականացվել միայն ստրկատիրական հզոր պետության կողմից, ու դա կարող էր լինել Ուրարտուն, որի ներկայությունը Սեւանի ավազանում արտահայտված է արքայական սեպագիր արձանագրություններով, ռազմական բերդերով ու հզոր բնակավայրերով:

Հաջորդ դիտարկումն այն է, որ Գեղեոն Միքայելյանի մոտ ոչ մի տեղ հիշատակված չէ Մարտունի քաղաքի հարավային բլրի վրա տարածվող «Կարմիր Աղլներ» ու Ալոյի ու Քրդի կող ամրոցներից մի քանի կիլոմետր հեռու, «Ջորով լի Աստվածածին» մատուռի կողքին, ձորակի մեջ տարածվող կիկլոպյան ամրոցների ու նրանց հարակից բնակատեղիների մասին:

Հենց Ալոյի կողի ու Քյուրդի կողի ամրոցներից, ինչպես ափի մեջ, մենք տեսանք «Կարմիր Աղլներ» ամրոցը, Գեղհովիտի Ալբերդ ու «Ջոջ կող» ամրոցները: Այս լեռան արեւելյան ստորոտին Աստղաձորի հարավում պահպանվող կիկլոպյան ամրոցի ու բնակատեղի ավերակներն են, մոտ 10 կիլոմետր հարավ՝ Մարտունու Մքնաձորի ու Հերի Բերդի ամրոցները: Ու այս ամրոցներից քիչ հյուսիս արդեն Վաղաշենի Սուրբ Հռիփսիմե մատուռի ավերակներն են, որտեղից գտնվել է արամեատառ Արտաշիսյան արձանագրությունը: Իսկ ավելի հյուսիս արդեն Վաղաշեն գյուղն է՝ փռված Սեւանի ծաղկածիծաղ ափին:

Ահա թե ինչու են կառուցվել այս երկու ամրոցները, որոնք հյուսիսից պատնեշել են Մարտունու տարածքի բարձունքներում գտնվող մի քանի բերդերն ու շեները՝ միաժամանակ իշխող դիրք ունենալով ողջ տարածքի վրա:

Ալոյի կողի հյուսիսային հատվածում, լեռան զառիվայրում, նկատելի են այլ պարիսպների շարքեր, որոնք հուշում են, որ ժամանակին այս ամրոցն ունեցել է պաշտպանական մի քանի բնագծեր՝ թշնամական հարձակումները կասեցնելու համար:

Ամեն դեպքում, այս գլխապտույտ բարձունքներին պահպանված կիկլոպյան դարաշրջանի ամրոցների ավերակները հպարտություն ու պատկառանք են ծնում առ մեր հեռավոր նախնիները՝ դաժան մաքառումների, քարակերտ ամրությունների կերտման գնով սեփական հայրենիքն ու ազգային ինքնությունը պաշտպանելու, զորեղ ու դաժան թշնամիներին դիմագրավելու ձգտումների համար:

Խոսրով Խլղաթյան

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳԵՂԱՆԿԱՐՉԱԿԱՆ ՍԻՄՊՈԶԻՈՒՄ Է ԱՆՑԿԱՑՎՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքում մի քանի օր է, ինչ մեկնարկել եւ ընթանում է գեղանկարչական սիմպոզիում՝ Գավառի Գեղարվեստի դպրոցի նախաձեռնությամբ ու Գավառի համայնքապետարանի կողմից տրամադրված ֆինանսական միջոցներով:

Ինչպես տեղեկացրեց Գավառի Գեղարվեստի դպրոցի տնօրեն Հասմիկ Թամամավեյանը, գեղանկարչական սիմպոզիումին հրավիրվել եւ մասնակցում են ՀՀ Նկարիչների միության 5 անդամներ՝ Վահագն Ջիվանյանը, Սրապիոն Դանիելյանը, Գարիկ Փրվեյանը, Արամ Մաշուրյանը եւ Հրաչյա Սաֆարյանը:

Միաժամանակ Գավառի Գեղարվեստի դպրոցի սաներին հնարավորություն է ընձեռնվել՝ մասնակցելու սիմպոզիումի աշխատանքներին եւ զարգացնել նկարչական գիտելիքները: Գեղանկարչական կտավների վրա պատկերվում են Գավառ համայնքի տեսարժան վայրերը: Գեղանկարիչներն աշխատում են Գավաթի Թթուջրի անտառում, Հացառատի Սուրբ Աստվածածին, Ծաղկաշենի Սուրբ Հովհաննես եկեղեցիների, Հայրավանքի, Նորատուսի պատմական հուշարձանների տարածքներում:

-Սիմպոզիումի մասնակիցները տեղում կատարել են գեղանկարչական էտյուդներ, որոնցից կազմվելու է մեր համայնքի բնակավայրերի տեսարժան վայրերը պատկերող գեղանկարչական աշխատանքների ֆոնդ՝ մշտական ցուցադրության համար,- ներկայացրեց Հասմիկ Թամամավեյանը:

Նոյեմբերի 11-ի դրությամբ արդեն ամփոփվեն սիմպոզիումի արդյունքները:

Խոսրով Խլղաթյան

22.qxd 15/11/2025 17:30 Page 6

ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆ. ՀԱՎԱՏՈՒՄ ԵՄ, ՈՐ ԱՅՆՏԵՂ ԳԵՐԲՆԱԿԱՆ ՄԻ ՀԶՈՐ ՈՒԺ ԿԱ...

/սկիզբը՝ էջ 1-ում

ԼԵՓՍԻՈՒՍԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆԻՆ

Այս տողերը գրում եմ ոչ որպես իմ ապրած կյանքի հիշողություն, դա անհնար է, քանի որ հանդիպումը, որի մասին խոսելու եմ, տեղի է ունեցել, երբ ես նորածին երեխա էի: Հետեւաբար երկու անձնավորությունների տեսակցության մանրամասները կարդացել եմ Կոստան Զարյանի «Գյուղի Օֆելյան» գրվածքում, բայց հատկապես՝ մորս ֆրանսերեն գրված, անտիպ հիշողությունների առաջին տետրում, որտեղ նա ավելի հանգամանորեն է գրում այդ հանդիպման մասին:

Մի քանի խոսք Կոստան Զարյանի, իր ընտանիքի եւ 1914 - 15 թվականների քաղաքական միջավայրի մասին:

Ծնողքս ամուսնացել են Միլանում, 1912-ի դեկտեմբերին, ապա տեղափոխվել են Վենետիկ, ուր հայրս ֆրանսերեն եւ ռուսերեն է դասավանդել «Բերլից Սքուլ» լեզուների դպրոցում: 1913-ի մարտ ամսին ծնողներս մեկնում են Կ.Պոլիս, ուր բնակություն են հաստատում Պերա թաղամասում: 1914-ի հունվարի մեկին լույս է տեսնում Կ. Զարյանի հիմնադրած եւ տնօրինած «Մեհյան» գրականության եւ արվեստի հանդեսը, որը սակայն երկար կյանք չունեցավ: Պոլսում իշխող հայատյաց թուրքական քաղաքականության հետեւանքով այն դադարեց նույն տարվա հուլիսի մեկին՝ 7- րդ համարի հրապարակումից հետո:

Եվրոպայում քաղաքական դրությունը պայթունակ էր: Մեծ ազգերը պատրաստվում էին պատերազմի, որ ծագեց 1914-ի օգոստոսի 2-ին, երբ գերմանական բանակը ներխուժեց Լյուքսեմբուրգ, Բելգիա, գրավեց Բրյուսելը, Նամյուրը, նվաճեց Էլզասը եւ Լոթարինգիան, իսկ սեպտեմբերի 13-ին՝ Մառնի վճռական ճակատամարտից հետո գերմանական բանակը կանգ առավ: 1914-ի հոկտեմբերի 2-ին օսմանյան Թուրքիան դաշնակցության պայմանագիր կնքեց Կայսերական Գերմանիո հետ ու ներգրավվեց պատերազմի մեջ: Երիտթուրք կառավարողները պատերազմի սկզբից եւեթ ձեռնամուխ եղան հայերին բնաջնջելու գործին: Արեւմտահայ ռազմական ուժի ոչնչացմանը զուգընթաց ծրագրայնորեն կազմակերպվեց Պոլսում բնակվող հայ մտավորականների ձերբակալումը եւ բանտարկումը: Այդ ողբերգական իրադրությունը ստիպեց հորս շուտափույթ թողնել Պոլիսը եւ Պոլսից մեկնող վերջին՝ դիվանագետներին վերապահված գնացքով հասնել Սոֆիա:

Բուլղարիան 1915 թվականի հոկտեմբերի 14-ի հայտարարությամբ մասնակցելու էր առաջին համաշխարհային պատերազմին: Ծայրահեղորեն լարված, բախումներով հղի էր բալկանյան միջավայրը: Սոֆիա էին ժամանել օտարազգի քաղաքական, զինվորական, դիվանագիտական դիտորդները:

Այդ ծանր մթնոլորտից խուսափելու նպատակով, հայրս մի քանի շաբաթ Սոֆիայում ապրելուց հետո հեռանում է քաղաքից ու բնակություն հաստատում մայրաքաղաքից ոչ շատ մեկուսացած Կրասնո Սելո՝ պարտեզների, ելակի դաշտերի եւ վայրի ծաղիկների մեջ թառած համեստ գյուղում: Մայրս իր հիշողություններում նշում է, որ նա ներշնչված աշխատում էր հիասքանչ բնություն ունեցող գյուղի խաղաղ պայմաններում: Դեռ Պոլսում սկսել էր գրել «Երեք երգեր» պոեմը, իր խոսքերով՝ «համաշխարհային պատերազմի նախօրյակին», իսկ մյուս մասերը անմիջապես հետո՝ «արյունի եւ ողբերգության օրերին»: «Ձայներ եկեղեցում», «Աստղերի քերթվածը», «Պարը», «Մոգերը» եւ «Փողի կանչը» մասերը Զարյանը գրել է Կրասնո Սելոյի այն մենատանը, որտեղ ապրում էինք 1915-ի գարնան եւ ամառային ամիսներին: Նախքան Բուլղարիայի պատերազմի մեջ մտնելը մեր ընտանիքը հեռացավ այդ երկրից նախ՝ Սալոնիկ, Պիրե Մեսոիկնա, Նեապոլ, իսկ հետո հոկտեմբերին հասանք Հռոմ, որտեղ հայրս բնակարան վարձեց Վիա Կրիսպիի «Պանսիոնե Պաչիտո» - ում: Այդ նույն պանսիոնում 1864-68 թվականներին բնակվել էր Հենրիկ Իբսենը եւ այդտեղ էր գրել իր երկու գլուխգործոցները՝ «Բրանդը» (1865) եւ «Պեր Գյունտը» (1867):

Այդ նույն պանսիոնում էին բնակվում Սոֆիայից փախած ռուս գրողներ եւ լրագրողներ Պեւզները, Ասարգինը, Վիկտորովը եւ Դերենտալը՝ Կ. Զարյանի հին ծանոթները, որոնք այցելում էին մեր Կրասնո Սելոյի մենատունը, ուր եւ 1915-ի գարնանը Զարյանին երկու անգամ այցելության եկավ Յոհաննես Լեփսիուսը՝ էնվեր փաշայի հետ տեսակցելուց առաջ եւ անմիջապես հետո: Գերմանացի հոգեւորական, «Գերմանահայկական ընկերության» նախագահ Լեփսիուսը Պոտսդամից ուղեւորվելով Պոլիս՝ կանգ էր առել Սոֆիայում, որպեսզի այցելի Կոստան Զարյանին:

Կ. Զարյանի «Գյուղի Օֆելյան» վիպակից մեջ բերեմ հետեւյալը.

-Դոկտոր Լեփսիուսը, վաղեմի, ազնիվ մեր այդ բարեկամը, եկել է, գնում է Պոլիս: Ուզում է դիմումներ անել: Ուզում է դեպքերի առջեւը առնել...

- Սոֆիա հասնելու օրը հեռագիր ստացավ, որ զավակը սպանված է ֆրանսիական ճակատի վրա:

- Խեղճ մարդ:

- Հեռագիրը կարդաց, գույնը գցեց եւ էլ այդ մասին չխոսեց:

Գարուն, արյուն, արեւ եւ վիշտ, 1915:

***

Այցելությունից հետո Լեփսիուսը մեկնում է Կ. Պոլիս՝ էնվեր փաշային հանդիպելու, փորձելու ազդել երիտթուրքական ղեկավարների վրա, որպեսզի վերջ տան հայերի կոտորածներին:

Ֆ. Վերֆելը իր «Մուսա լեռան քառասուն օրը» վեպում նկարագրում է Լեփսիուսի ժամանումը Պոլիս, թե ինչպես էնվերին՝«Պատերազմի աստծուն» հանդիպելուց առաջ, նա «հարցաքննում» էր երկրի ներսից եկած գերմանացիներին կամ ամերիկացիներին: Նա օրեր շարունակ նստած էր ամերիկյան Բիբլ Հաուսի ընկերության շենքում, հարցուփորձ էր անում տարբեր միաբաննությունների պատկանող հոգեւորականների, գաղտնի տեսակցություններ ունենում հայերի հետ, եւ այս բոլորը՝ որպեսզի լավ պատրաստված լինի մեծ հանդիպման պահին»: Հանգամանորեն նախապատրաստված հանդիպման արդյունքը բացասական եղավ, էնվերը մերժեց վերջ տալ կոտորածին:

Լեփսիուսը հուսախաբված մեկնում է Պոլսից, բայց նորից կանգ է առնում Սոֆիայում եւ այցելում Կ. Զարյանին. ուզում էր նրան տեղյակ պահել էնվերի հետ ունեցած հանդիպման մասին եւ գաղտնի կարգադրություններ անել: Այդ երկրորդ հանդիպման մասին Կոստան Զարյանը գրում է.

«Կեռասենու ճյուղը ընկել է պատուհանի վրա, մինչ սենյակը տխուր է: Բարձր ճակատը ձեռքի մեջ առած, աչքերը վիատ, գույնը նետած՝ նստել է Լեփսիուսը: Մեզնից ամեն մեկը խոսում է ցած, դողդողացող ձայնով, ինչպես խոսում են, երբ հարեւան սենյակում օրհասական հիվանդ է պառկած:

Խեղճ մեր աչքերը եւ խեղճ մեր ձայնը:

- Երբ առարկում էի, էնվերը կատաղած ինձ նայեց եւ շնական բառերով «Հայաստանում հայ չպիտի մնա»,- ասաց...

Բայց մի՞թե...

Ու սրտերի մեջ անորոշը հեծկլտում է: Նայվածքները հեռանում են, սարսափած սավառնում սահմանից այն կողմը տեղի ունեցող չտեսնված ողբերգությունների վրա:

Լեփսիուսը ձեռքերը վեր է կարկառում: Երկայն մատներով, նուրբ, անարյուն եւ տխուր ձեռքեր: Բառերը կանգ են առնում: Երկաթե ծանր գնդերի նման բառերը կախվում են, մինչ սիրտը՝ տեսողության բարձրագույն այդ կետը, խենթ կնոջ պես հեկեկում է:

- Ուրեմն այդպես, ուրեմն տաճիկները որոշել են բնաջինջ անել հայերին, ուրեմն...

Կեռասենու ճյուղը անհանգիստ բախում է պատուհանները: Լեփսիուսը ճակատն ավելի է սեղմում, մոխրագույն աչքերը վար է նետում եւ լռում, լռում:

Գարուն, արյուն...

Տեր իմ Աստված, Տեր իմ Աստված»:

***

Նույն հանդիպման մասին մայրս իր հիշողություններում տալիս է մի քանի մանրամասնություն, հետեւյալ կերպ.

«Կոստյան (մայրս այդպես էր անվանում հորս) երեկոյան ուշ ժամին վերադառնում է քաղաքից (իմա՝ Սոֆիայից), վանդակորմի դուռը թողնում է բաց, խոհեմորեն առանց աղմկելու ներս է թողնում մեկ անձրեւանոց, երկրորդ անձրեւանոցը եւ երրորդը: Ճանաչեցի մեր բարեկամի գլխարկը (իմա՝ Լիպարիտ Նազարյանց): Լռությամբ մտնում են ներս, գնում Կոստյայի աշխատասենյակը եւ փակում դուռը:

- Սիրելիս,- ասում է Կոստյան,- մենք այս երեկո գաղտնի նիստ ունենք այս փոքր տանը, քաղաքից հեռու, ոչ ոք չի կասկածելու: Հայերի մեծ բարեկամը այստեղ է՝ Դոկտոր Լեփսիուսը, որը իր ամբողջ կյանքը նվիրել է հայ դատին:

Կոստյան ասաց. «Պատրաստիր սամովարը եւ տուր ինձ: Շարունակիր նայել պատուհանից: Թուրք գաղտնի ոստիկանները մեզ հետեւում են»:

Կես գիշեր էր, Կոստյան մտավ սենյակ եւ ասաց.

-Սիրելիս, շուտ քնեցրու Արմենին եւ եկ մի բան նվագիր: Լեփսիուսը շատ ընկճված է, չարաղետ բան է կանխազգում, քանզի Թուրքիան լքված վիճակում է, վրեժխնդիր է լինելու:

Մտնում եմ ներս, չորս խոնարհված գլուխ, մտքերի բեռից ծանրացած, ծխախոտի խիտ ծխի մեջ թաղված: Բացում եմ դաշնամուրիս կափարիչը եւ հնչեցնում Պաթետիկայի ծանր ակկորդները: Երբ վերջացրի, Լեփսիուսը ձեռքերի մեջ էր պահել իր սպիտակած գլուխը: Քիչ հետո ոտքի կանգնեցին, վերցրին իրենց անձրեւանոցները, գլուխ տվին եւ ուղղվեցին դեպի պարտեզի դուռը: Մեր տան բարեկամը մոտեցավ ինձ եւ ասաց.

-Մեկնում եմ Պոլիս, ինձ ընտրեցին, որպեսզի գաղտնի պատգամագրեր տանեմ մեր հայրենակիցներին»:

***

Լեփսիուսի կենսագրությանն առնչվող այս դեպքը տարիներ առաջ հաղորդել եմ Հալլեի համալսարանի աստվածաբանության դասախոս , պրոֆեսոր Հերման Հոլցին, որը պատմաբան - հնէաբան, «Երեք հազար տարի. Հայաստան» գրքի հեղինակ Բ. Բրենդիեսի հետ պատրաստել էին Լեփսիուսի ամբողջական գործերի բազմահատոր հրատարակությունը: Նրանց համար այն ժամանակ հավանաբար անհասկանալի էր մնացել, թե ինչու Լեփսիուսը էնվերի հետ ունեցած իր տեսակցությունից առաջ եւ Պոլսից Գերմանիա վերադարձի ճանապարհին կանգ էր առել Սոֆիայում:

Արմեն Զարյան
«+ԿԻՆՈ» 2015 թ.

ՖԻԼՄ

ԹԵՐԹԻ ԷՋԵՐԻՑ

ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆ. ՀԱՎԱՏՈՒՄ ԵՄ, ՈՐ ԱՅՆՏԵՂ ԳԵՐԲՆԱԿԱՆ ՄԻ ՀԶՈՐ ՈՒԺ ԿԱ

Ռ. Մաթոսյան

ԼԵՓՍԻՈՒՍԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆԻՆ

ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎՈՒՄ Է ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԴԱՀԼԻՃԸ ԵՎ ԲԵՄԻ ՀԱՏՎԱԾԸ

Արդեն մեկ ամիս է, ինչ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն գյուղում սկսվել եւ ընթանում են մշակույթի տան դահլիճի եւ բեմական հատվածի հիմնանորոգման աշխատանքները «Մասնակցային բյուջետավորում» ծրագրի շրջանակներում:

Ինչպես տեղեկացրեց Ներքին Գետաշենի վարչական ղեկավար Ռուբեն Զուլոյանը, Ներքին Գետաշենի մշակույթի տան դահլիճի ու բեմական հատվածի հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 36 միլիոն դրամ, որն ամբողջությամբ հատկացվել է Մարտունի համայնքի բյուջեից:

Ծրագրով նախատեսվում է մեծ դահլիճի, բեմի, հանդերձարանային երկու սենյակների, սանհանգույցների, միջանցքի նորոգում, նոր դռների ու լուսամուտների տեղադրում:

Շինարարական աշխատանքները նախատեսված է ավարտի հասցնել այս տարվա ընթացքում:

-Ներքին Գետաշենի մշակույթի տունը հիմնանորոգման է ենթարկվել տարբեր տարիների ընթացքում ու տարբեր ծրագրերով: Իսկ «Մասնակցային բյուջետավորում» ծրագրով իրականացվող այս աշխատանքներով մենք ավարտի ենք հասցնում մշակույթի տան հիմնանորոգման գործընթացը: Կահավորումը կիրականացվի մեկ այլ ծրագրի շրջանակներում,- ներկայացրեց Ռուբեն Զուլոյանը:

«Գեղամա աշխարհ»

22.qxd 15/11/2025 17:30 Page 7

ՎԱՐԴԵՆԻԿՈՒՄ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԵՐԿՈՒ ԾՐԱԳԻՐ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՓՈՒԼՈՒՄ ԵՆ ԳՏՆՎՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վարդենիկ գյուղում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում խմելու ջրատարի ներքին ցանց է կառուցվել Կամո Շահինյան, 2-րդ, 8-րդ եւ 34-րդ փողոցներում:

Վարդենիկի խմելու ջրատարի ներքին ցանցի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 89 միլիոն 836 հազար դրամ, որի 75 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 25 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է խմելու ջրատարի ներքին ցանցի կառուցում Վարդենիկի Կամո Շահինյան, 2-րդ, 8-րդ եւ 34-րդ փողոցներում, 2320 գծամետր ընդհանուր երկարությամբ:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի հուլիսից եւ հոկտեմբերի 31-ի դրությամբ արդեն գտնվում են ավարտական փուլում:

Ծրագրի իրականացման արդյունքում Վարդենիկ գյուղի 200 տնտեսություն կունենա անխափան ու որակյալ ջրամատակարարում:

Շինարարական աշխատանքներն իրականացրել է «Ստրոնգ Շին» ՍՊԸ-ն:

Սուբվենցիոն մեկ այլ ծրագրով ավարտին են մոտենում 1-ին, 12, 17, 18, 24 եւ 25-րդ փողոցների հիմնանորոգման աշխատանքները, որոնք կատարվել են ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում:

Վարդենիկի փողոցների հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 207 միլիոն 398 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսվում է Վարդենիկի 1-ին, 12, 17, 18, 24 եւ 25-րդ փողոցների ասֆալտապատում՝ 3230 գծամետր երկարությամբ եւ 16 հազար 150 քառակուսի մետր մակերեսով: Երկու փողոցներում տեղադրվում են ջրահեռացման եւ ոռոգման առուներ:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի օգոստոսից եւ հոկտեմբերի 30-ի դրությամբ իրականացվել շուրջ 90 տոկոսով:

Շիանարությունը նախատեսվում է ավարտի հասցնել այս տարվա ընթացքում:

Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտի հասցնել 2025 թվականի ընթացքում:

Աշխատանքներն իրականացրել է ,ՎՍՎ ՔԱՄՓՆԻԵ ՍՊԸ-ն:

Ծրագրի շահառու են հանդիսանում շուրջ 4 հազար բնակիչ: Վերոնշյալ փողոցներն ասֆալտապատվում են առաջին անգամ:

«Գեղամա աշխարհ»

ԼԻՃՔՈՒՄ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎՈՒՄ Է ԵՐԵՔ ՓՈՂՈՑ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Լիճք գյուղում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում սկսվել եւ ընթանում են Ա8 թաղամասի 10-րդ եւ 2-րդ, Ա3 թաղամասի 14-րդ փողոցի հիմնանորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայքնապետարանի աշխատակազմից, Լիճքի 3 փողոցների հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 118 միլիոն 760 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է Ա8 թաղամասի 10-րդ եւ 2-րդ, Ա3 թաղամասի 14-րդ փողոցի հիմնանորոգում՝ ասֆալտապատմամբ, 1817 մետր ընդհանուր երկարությամբ եւ 9085 քառակուսի մետր մակերեսով:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի հոկտեմբերի 15-ից եւ իրականացվել շուրջ 70 տոկոսով: Շինարարությունը նախատեսված է ավարտի հասցնել այս տարվա ընթացքում:

Ծրագրի շահառու են հանդիսանում շուրջ 2000 բնակիչ:

Շինարարական աշխատանքներն իրականացնում է «ՎՍՎ ՔԱՄՓՆԻ» ՍՊԸ-ն:

«Գեղամա աշխարհ»

ՎԱՂԱՇԵՆՈՒՄ ԽՄԵԼՈՒ ՋՐԱՏԱՐԻ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑ Է ԿԱՌՈՒՑՎԵԼ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վաղաշեն գյուղում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում խմելու ջրատարի ներքին ցանց է կառուցվել 7-րդ փողոցում:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, Վաղաշենի 7-րդ փողոցի խմելու ջրատարի ներքին ցանցի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 9 միլիոն 72 հազար դրամ, որի 75 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 25 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է խմելու ջրատարի ներքին ցանցի կառուցում՝ 800 գծամետր երկարությամբ, պոլիէթիլենային խողովակներով:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի հունիսից եւ ավարտվել նույն տարվա հուլիսի ընթացքում: Ծրագրի իրականացման արդյունքում արդեն Վաղաշենի 7-րդ փողոցի 50 տնտեսություն օգտվում են շուրջօրյա ու որակյալ ջրամատակարարումից:

Շինարարական աշխատանքներն իրականացրել է «Հայկ եւ Նորիկ» ՍՊԸ-ն:

«Գեղամա աշխարհ»

ԵՐԱՆՈՍՈՒՄ ՈՌՈԳՄԱՆ ՋՐԱՏԱՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՑԱՆՑ Է ԿԱՌՈՒՑՎՈՒՄ



Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Երանոս գյուղում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում այս տարվա հոկտեմբերի սկզբից սկսվել եւ ընթանում են ոռոգման ջրատարի արտաքին ցանցի կառուցման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրեց Երանոսի վարչական ղեկավար Սաշա Բավեյանը, Երանոսի ոռոգման ջրատարի արտաքին ցանցի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 110 միլիոն դրամ, որի 75 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 25 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսվում է ոռոգման արտաքին ցանցի կառուցում՝ 2800 մետր երկարությամբ, որից 639 մետրը՝ երկաթբետոնյա կիսախողովակներով, մնացած 2161 մետրը՝ պոլիէթիլենային ստորգետնյա փակ խողովակաշարով:

2025 թվականի հոկտեմբերի 28-ի դրությամբ շինարարական աշխատանքներն ավարտվել են շուրջ 40 տոկոսով:

Ծրագրի իրականացման արդյունքում եկող տարվա ոռոգման շրջանից շուրջ 40 հեկտարի վրա ոռոգման ջուրը տնտեսություններին կմատակարկարվի ժամանակին ու անկորուստ: Ծրագրի շահառու են հանդիսանում շուրջ 550 տնտեսություն:

Շինարարական աշխատանքներն իրականացնում «Բիդեք» ընկերությունը:

Շինարարությունը նախատեսվում է ավարտի հասցնել 2025 թվականի ընթացքում:

«Գեղամա աշխարհ»

ԾՈՎԻՆԱՐՈՒՄ ԽՄԵԼՈՒ ՋՐԱՏԱՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՑԱՆՑ Է ԿԱՌՈՒՑՎՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծովինար գուղում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրի շրջանակներում ընթանում են «Ալվաղ» թաղամասի խմելու ջրատարի արտաքին ցանցի կառուցման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, Ծովինարի «Ալվաղ» թաղամասի խմելու ջրատարի ներքին ցանցի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 23 միլիոն 136 հազար դրամ, որի 75 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 25 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է «Ալվաղ» թաղամասի համար խմելու ջրատարի արտաքին ցանցի կառուցում՝ 1477 գծամետր երկարությամբ, պոլիէթիլենային խողովակներով:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի հուլիս ամսից եւ նոյեմբերի 4-ի դրությամբ իրականացվել շուրջ 80 տոկոսով:

Ծրագրի շահառու են հանդիսանում Ծովինար գյուղի շուրջ 300 տնտեսություն, որոնք ջրատարի արատքին ցանցի շահագործումից հետո կապահովվեն շուրջօրյա ու որակյալ խմելու ջրի մատակարարմամբ:

Շինարարական աշխատանքներն իրականացնում է «Արտ Պլաս» ՍՊԸ-ն:

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՀԱՎԱՔՎԵԼ Է ՇՈՒՐՋ 100 ՀԱԶԱՐ ՏՈՆՆԱ ԿԱՐՏՈՖԻԼԻ ՀԱՄԱԽԱՌՆ ԲԵՐՔ

Գեղարքունիքի մարզի տնտեսություններում արդեն ավարտին է մոտենում կարտոֆիլի բերքահավաքը:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պահպանության վարչությունից, մարզում առկա 5566 հեկտար կարտոֆիլի ցանքերում բերքահավաքն ամբողջությամբ ավարտվել է, ինչի արդյունքում, նախնական տվյալներով, մարզի տնտեսություններում հավաքվել է շուրջ 100 հազար տոննա կարտոֆիլի համախառն բերք:

Կարտոֆիլի միջին բերքատվությունը կազմում է շուրջ 20 ցենտներ:

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՈՒԺՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐ ԱՄՍԻՆ ԾՆՎԵԼ Է 169 ԵՐԵԽԱ

Գեղարքունիքի մարզի բուժհաստատություններում 2025 թվականի հոկտեմբեր ամսին լույս աշխարհ են եկել 169 երեխա՝ 95 տղա, 74 աղջիկ:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության եւ սոցիալական հարցերի վարչությունից, 91 երեխա ծնվել է Մարտունու ծննդատանը, 32-ը՝ Գավառի, 24-ը՝ Սեւանի, 19-ը՝ Վարդենիսի բժշկական կենտրոններում, 3-ը՝ Ճամբարակի առողջության կենտրոնում:

2024 թվականի հոկտեմբերին Գեղարքունիքի մարզի բուժիմնարկներում լույս աշխարհ են եկել 161 երեխա՝ 98 տղա, 63 աղջիկ:

22.qxd 15/11/2025 17:30 Page 8

ՆԱ ԲԱՐՁՐ ԷՐ ՊԱՀՈՒՄ ՈՒՍՈՒՑՉԻ ՊԱՏԻՎՆ ՈՒ ԿՈՉՈՒՄԸ

Այս տարվա հոկտեմբերի 7-ի առավոտյան հեռավոր ՌԴ հասավ իմ սիրելի ուսուցիչ, Գեղարքունիքի մարզի Լճաշեն գյուղի միջնակարգ դպրոցի նախկին տնօրեն, հարգարժան Վոլոդյա Ղազարյանի մահվան բոթը:

Ինձ բախտ է վիճակվել՝ նրա հետ աշխատել մոտավորապես մեկ տասնամյակ, սակայն այդ տարիներից մնացին այնքա՜ն հետաքրքիր, այնքա՜ն գեղեցիկ ու լուսավոր հիշողություններ:

Դժվարին, մութ ու ցուրտ տարիներ էին, սակայն մարդկային ջերմությունն ու հոգատարությունն այնքան շատ էր, որ մինչ օրս եւ հար ու հավիտյան այդ ժամանակահատվածի գեղեցիկ հուշերն իմ ուղեկիցը կլինեն:

Վոլոդյա Խոսրովի Ղազարյանը ծնվել է 1940 թվականին, Սեւանի շրջանի Լճաշեն գյուղում, մանկավարժի ընտանիքում: Դպրոցն ավարտելուց հետո ծառայել է խորհրդային բանակում: Զորացրվելուց հետո ընդունվել է Երեւանի Հիդրոմելիորացիայի տեխնիկում, 1962 թվականին՝ Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի «Պատմության» ֆակուլտետը:

Ուսմանը զուգահեռ Վոլոդյա Ղազարյանն աշխատել է հարազատ գյուղի դպրոցում որպես «Պատմություն» առարկայի ուսուցիչ, ուսումնադաստիարակչական գծով տնօրենի տեղակալ:

Երկար տարիներ՝ 1982 թվականից մինչեւ 2000 թվականը, Վոլոդյա Ղազարյանն զբաղեցրել է Լճաշենի միջնակարգ դպրոցի տնօրենի, այնուհետ՝ Մխիթար Սեբաստացի համալսարանի պրոռեկտորի պաշտոնը՝ միաժամանակ դասախոսելով «Հայոց պատմություն» առարկան:

Ողջ գիտակցական կյանքը նա նվիրվել է մանկավարժությանը, պարգեւատրվել պատվոգրերով, շնորհակալագրերով, իր սաների, աշխատանքային ընկերների անկեղծ ու ջերմ սիրով:

Հմուտ մանկավարժի, լավ ընկերոջ ու ազնիվ քաղաքացու հիշատակը վառ կմնա նրան ճանաչողների եւ Լճաշենի ազգաբնակչության սրտերում:

Ննջեք խաղաղությամբ մեր սիրելի ուսուցիչ, մեր պատվարժան տնօրեն եւ մարդկային վեհ հատկանիշներով օժտված հայորդի:

Լճաշենի միջնակարգ դպրոց

Վալյա Խաչատրյան
Լճաշենի միջնակարգ դպրոցի նախկին կազմակերպիչ, Հայոց լեզվի եւ հայ գրականության ուսուցչուհի

ԾՈՎԻՆԱՐՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑ Է ԿԱՌՈՒՑՎԵԼ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծովինար գյուղում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում արտաքին լուսավորության ցանց է կառուցվել:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, Ծովինարի արտաքին լուսավորության ցանցի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 52 միլիոն 800 հազար դրամ, որի 60 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 40 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է արտաքին լուսավորության ցանցի կառուցում Ծովինարի 22 տարբեր փողոցներում, 10 հազար գծամետր երկարությամբ, ԼԵԴ համակարգով աշխատող 363 լուսատուների տեղադրմամբ:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի հուլիսից եւ հոկտեմբերի վերջի դրությամբ արդեն գտնվում են ավարտական փուլում:

Ծրագրի իրականացման արդյունքում Ծովինարի ավելի քան 2 հազար բնակիչ լուսավորության արտաքին ցանցից առաջին անգամ օգտվելու հնարավորություն կունենան:

Շինարարական աշխատանքներն իրականացրել է «ԼԱՅԹԻՆԳ ԱԼԵՔ» ՍՊԸ-ն:

ՎԱՐԴԵՆԻՍԻ ՄԱՐԶԱԴՊՐՈՑՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼ Է ՀՈՒՆԱՀՌՈՄԵԱԿԱՆ ԸՄԲՇԱՄԱՐՏԻ ԲԱՑ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Ռաֆիկ Եսայանի անվան քաղաքային մարզադպրոցում անցկացվել է Ռաֆիկ Եսայանի հիշատակին նվիրված հունահռոմեական ըմբշամարտի բաց առաջնություն:

Ինչպես տեղեկացրին Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմից, առաջնությանը ներկա են եղել Վարդենիսի համայնքապետարանի աշխատակիցներ, Ռաֆիկ Եսայանի այրին՝ տիկին Գայանեն, բազմաթիվ հյուրեր, մարզասերներ: Հուշամրցաշարին մասնակցել են Վարդենիսի, Գավառի, Նորատուսի, Սեւանի, Եղեգնաձորի, Դիլիջանի, Հրազդանի, Ջրվեժի, Մասիսի, Մալաթիայի, Արաբկիրի, Վաղարշապատի,Վեդիի, Քաջարանի եւ Կապանի թիմերը:

Թիմային հաշվարկով առաջին տեղը գրավել է Ջրվեժի թիմը: Երկրորդ տեղը զբաղեցրել է Վաղարշապատի թիմը, երրորդ տեղը՝ Վարդենիսի թիմը:

Մրցանակային տեղեր գրաված մարզիկները պարգեւատրվել են համապատասխան կարգի պատվոգրերով եւ մեդալներով, մրցանակային 1-ին տեղ զբաղեցրած մարզիկները՝ գավաթներով:

Մրցաշարի մրցավարական անձնակազմը գլխավորել է ՀՀ Գեղարքունիքի մարզի հունահռոմեական ըմբշամարտի ֆեդերացիայի նախագահ Ռուբիկ Դումոյանը:

ԾՈՎԱՍԱՐՈՒՄ ԽՄԵԼՈՒ ՋՐԱՏԱՐԻ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑ Է ԿԱՌՈՒՑՎԵԼ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծովասար գյուղում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում խմելու ջրատարի ներքին ցանց է կառուցվել:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, Ծովասարի խմելու ջրատարի ներքին ցանցի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 28 միլիոն 859 հազար դրամ, որի 75 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 25 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսվում է խմելու ջրատարի ներքին ցանցի կառուցում Ծովասար գյուղի 8 տարբեր թաղամասերում, 1400 գծամետր ընդհանուր երկարությամբ, տնային 100 միացումներով: Ծրագրի շահառու են հանդիսանում Ծովասարի 100 տնտեսություն:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի հուլիսից եւ ավարտվել սեպտեմբերի վերջերին:

Շինարարական աշխատանքներն իրականացրել է «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ն:

Ծրագրի իրականացման արդյունքում Ծովասարի 100 տնտեսություն ապահովվել են շուրջօրյա ու որակյալ ջրամատակարարմամբ:

ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎՈՒՄ Է ՍԵՎԱՆ-ՄԱՐՏՈՒՆԻ-ԳԵՏԱՓ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻ ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆԻ ՀԱՏՎԱԾԻ ԿԱՄՈՒՐՋԸ

Արդեն շուրջ 1 ամիս է, ինչ Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն գյուղի հատվածում սկսվել եւ ընթանում են Սեւան-Մարտունի-Գետափ միջպետական ճանապարհի՝ Արգիճի գետի վրա կառուցված կամրջի հիմնանորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչությունից, Սեւան-Մարտունի-Գետափ միջպետական ճանապարհի Ներքին Գետաշենի հատվածի կամրջի հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 78,5 միլիոն դրամ, որն ամբողջությամբ հատկացվում է պետբյուջեի միջոցներից:

Ծրագրով նախատեսված է՝ կամրջի հիմքերի ու հենարանների ամրացում, թռիչքային կառուցվածքի վերանորոգում ու երթեւեկելի մասի երկշերտ ասֆալտբետոնյա ծածկի տեղադրում:

2025 թվականի նոյեմբերի 4-ի դրությամբ շինարարական աշխատանքներն ավարտվել են շուրջ 80 տոկոսով:

Շինարարությունը նախատեսվում է ավարտի հասցնել այս տարվա ընթացքում:

Շինարարական աշխատանքներն իրականացնում է «Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ն:

ՋՈՐԱԳՅՈՒՂՈՒՄ ԿԱՄՈՒՐՋ ՈՒ ՀԵՆԱՊԱՏ Է ԿԱՌՈՒՑՎՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ջորագյուղ գյուղում ՀՀ կառավարության կողմից 2024 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում ընթանում են 100 մետր երկարության հենապատի եւ կամրջի կառուցման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, Ջորագյուղի 4-րդ փողոցում կառուցվող հենապատի եւ կամրջի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 31 միլիոն դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2024 թվականի դեկտեմբերին եւ 2025 թվականի նոյեմբերի 4-ի դրությամբ իրականացվել շուրջ 60 տոկոսով: Շինարարությունը նախատեսվում է ավարտել 2025 թվականի ընթացքում:

Շինաշխատանքներն իրականացնում է «Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ն:

ԳԵՂԱՄԱ աշխարհ

Լրատվական գործունեություն իրականացնող «Գեղարքունիք» թերթի խմբագրություն» ՓԲԸ: Հասցեն՝ ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7
էլ.հասցե՝ khosrov1@yandex. ru
Գլխավոր խմբագիր՝ Խոսրով Խլղաթյան
հեռ. բջջ. 094022692

Վկայական՝ 02 Ա 050560: Գրանցման համարը՝ 25.120.00834:
Տրված 07.05.2001թ.: Տպաքանակը՝ 1000: Ծավալը՝ 2 մամուլ:
Թողարկման օրը՝ 14. 11. 2025 թ.:
Տպագրվում է «Սամարկ» ՍՊԸ տպարանում:
«Գեղամա աշխարհ» թերթի բոլոր համարներին կարող եք ծանոթանալ https://tert.nla.am կայքում: